DOI: https://doi.org/10.54338/18294200-2024.3-02 *ԴԻԶԱՅՆ*

ԳՈՐԳԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆԵՐՍՈՒՅԹԻ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՌԱՐԿԱ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արմինե Լևոնի Բաբաջանյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

armenuhiartdesign@gmail.com

Հոդվածը ներկայացնում է գորգի (կարպետի) պատկերագրությունը հայ միջնադարյան մանրանկարչության մեջ: Հետազոտության նպատակն է ներկայացնել գորգի պատկերագրության երկակի դերը հոգևոր և կիրառական նշանակությամբ՝ դիտարկելով ներքին միջավայրի գեղարվեստական հարդարումը մանրանկարչության օրինակներով: Թեման արդիական է, քանի որ գորգի և մանրանկարչության կապը նպաստում է մշակութային ժառանգության վերարժևորմանը և պատկերագրության միջոցով կարելի է նոր մոտեցմամբ վերականգնել միջնադարյան հայկական տան ամբողջական պատկերը: Ուսումնասիրության խնդիրն է բացահայտել գորգի պատկերման ծիսական և գեղարվեստական գործառույթները: Արդյունքում հանդես են բերվում եզրահանգումներ. 1-մանրանկարային հորինվածքներում գորգը ներսույթի մաս է կազմում, 2-մանրանկարչական պայմանականություններով հանդերձ գորգի պատկերագրությունն իրատեսական է: Հետազոտությունը կարող է ուղեցույց լինել միջնադարյան Հայաստանի ներքին հարդարման ավանդույթները և հայկական գորգարվեստի խորհրդանշական առանձնահատկություններն ուսումնասիրողների համար:

Բանալի բառեր. *մատյան, ձեռագիր, մանրանկարչություն, պատկերագրություն, նկարազարդում, առարկայական միջավայր, գեղարվեստական հարդարում, գորգ, կարպետ*

Ներածություն

Միջնադարյան Հայաստանում իր ուրույն տեղն է ունեցել ձեռագրային արվեստը: Մատյանները նկարազարդվել են հատկապես կրոնական թեմաներով՝ մարմնավորելով քրիստոնեական գաղափարներ: Նկարիչները շեշտը դրել են ոչ միայն գեղագրության, այլև մանրանկարչության վրա՝ ուժգնացնելով սուրբ տեքստերի տեսողական գրավչությունն ու հաղորդակցման ուժը: Վանքերում տեղակայված գրչության կենտրոններում գրվել և պատկերազարդվել են բազմաբնույթ հոգևոր գրքեր: Այսօր շուրջ երեսուն հազար ձեռագիր պահպանվել են ողջ աշխարհի հավաքածուներում, սակայն տասնյակ անգամ ավելին են եղել, որոնք ոչնչացվել են նվաճողների կողմից կամ կորսվել են դարերի խորքում [1]:

Վարպետները ձևավորելով սուրբ գրքերը, որքան էլ հոգևոր գաղափարներով առաջնորդվեին, միևնույն է ցանկացել են ներմուծել աշխարհիկ թեմաներ: Գորգերն ու կարպետները պատկերվել են այնպես, որ արտացոլել են հայկական աշխարհայացքի և առարկայական միջավայրի խորքային կապը: Հայկական միջնադարյան մանրանկարչության մեջ գորգն ավելին է, քան

դեկորատիվ պատկեր: Այն ազգային ինքնության խորհրդանիշ է՝ տոգորված բազմանշանակ իմաստներով:

Գորգի ծագման, ստեղծման և զարգացման վերաբերյալ պատմաբան Վ. Թեմուրճյանն իր «Գորգագործությունը Հայաստանում, պատմաազգագրական ուսումնասիրություն» գրքում լիարժեք վերլուծում է գորգարվեստի զարգացումները, իսկ գերմանացի պատմաբան Ֆոլքմար Գանցհորնը «Քրիստոնեա-արևելյան գորգը: Ակունքներից մինչև XVIII դ. ընկած պատկերագիտական զարգացման ուրվագիծ» գրքում վեր է հանում հայկական գորգի գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունները: Պատմաբան Բ. Առաքելյանը «Քաղաքները և արհեստները IX-XIII դդ.» իր ազգագրական ուսումնասիրություններով դասակարգում է հայ միջնադարյան արհեստագործության ոլորտները, որոնց մեջ զգալի տեղ է հատկացրել գորգագործությանը, կարպետագործությանը, անկվածագործությանը և ձեռագրային արվեստին: Հայագետ Ս. Դավթյանի «Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության» գիրքը հագեցած նյութեր է ներկայացնում հայկական կենցաղում գորգի և կարպետի տեսականու մասին: Այսպիսով, կարելի է նկատել, որ հայկական մանրանկարներում գորգի, կարպետի և ծածկոցների պատկերագրության վերաբերյալ որոշ սուղ վերլուծություն ներկայացնում է միայն արվեստաբան Ա. Գևորգյանն իր «Արհեստները և կենցաղը հայկական մանրանկարչության մեջ» աշխատության մեջ:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել գորգը մանրանկարչության մեջ՝ գնահատելով դրա գործառույթը որպես հայկական նյութական մշակույթի փաստագրված կողմ:

Հասցեագրված խնդիրներն են.

- հայկական միջնադարյան մանրանկարչության մեջ գորգի պատկերագրության վերաբերյալ հետազոտությունների սղությունը, որը ենթադրում է առավել ուշադրություն՝ գիտական վերլուծությունների անհրաժեշտության առումով,
- միջնադարյան մանրանկարչության մեջ ներքին միջավայրում ծածկոցների գեղարվեստական մեկնաբանման մարտահրավերները, որոնք հաճախ պահանջում են մշակութային մանրակրկիտ դիտարկումներ:

Հետազոտության համար տվյալները հավաքագրվել են հայկական ձեռագրերի մանրանկարների, հայ մշակույթի պատմության գիտական ուսումնասիրությունների, մասնավորապես, միջնադարյան դեկորատիվ կիրառական արվեստի և գորգագործության վրա կենտրոնացած աղբյուրների հիման վրա:

Նյութեր և մեթոդներ

Գորգը սրբազան երևույթ է եղել Հայոց աշխարհի պատմության մեջ: Միջնադարյան ժամանակներից այն ունեցել է մեծ հեղինակություն: Հայկական գորգի վերաբերյալ խոսել են ինչպես շքեղագույն արժեքի մասին, որը պատիվ է եղել ձեռք բերել: Անգամ հայ իշխանական տները նվիրատվությունների շնորհիվ կարևոր քաղաքական և տնտեսական հարցեր են լուծել: Գորգար-

վեստի մեջ կենտրոնացված են դարերից եկող տիեզերածին գաղափարներ: Դրանք զարդագիր տեքստեր են նախնիների պաշտամունքի, կրոնի և կյանքի հանդեպ ունեցած պատկերացումների վերաբերյալ: Այն հայ մշակույթի ինքնիշխան կրողն է հանդիսացել, իր մեջ պարուրելով կերպարվեստի և զարդարվեստի բազմաբնույթ տարրեր [2]:

Հայկական դեկորատիվ կիրառական արվեստում հանդիպող նախշազարդի մոտիվներից յուրաքանչյուրն իր մեջ կրում է խորհրդապաշտական բնույթ: Դրանք են՝ չորս տարերքներ, պտղաբերություն, մայրություն, ծնող-զավակ, տոհմ-ընտանիք, վիշապամարտ խորհրդանշող զարդապատկերները:

Նկ. 1. Պազիրիկ գորգ, Ք.ա. V դ.

Պատմության ընթացքում դեկորատիվ նախշերը դարձել են առեղծվածային և կրել են խորը ծիսական նշանակություն: Այս օրինաչափությունները հաճախ վերագրվում էին պաշտպանիչ հատկությունների՝ ընդեմ չար ուժերի: Գորգերն անվանվել են ըստ պատկերային հարդարանքի՝ խորանագորգ, վիշապագորգ, կենաց ծառ գորգ, աստղագորգ, խաչազարդ գորգ, վահանագորգ և այլն: Գորգերի զարդամոտիվները տարածվել են ինչպես նաև ձեռագիր արվեստի և հայկական ավանդական հագուստի մեջ՝ արտացոլելով հոգևորի և աշխարհիկի կապը հայկական մշակույթում [3]:

Պազիրիկն ամենավաղ հայկական գորգն է, որը թվագրվում է Ք.ա. V դ. (նկ. 1): Այն հայտնաբերվել է Ալթայի լեռներում՝ Պազիրիկի արքայական դամբարանից, ինչը ցույց է տալիս գորգի արժեքավորությունը: Գորգն առանձնանում է իր յուրահատուկ պատկերներով և հյուսվածքով, որը վկայում է հին արհեստագործության բարձր մակարդակի մասին:

Պազիրիկ գորգը կարելի է դիտարկել որպես հայկական գորգագործության հնագույն արտահայտություն, որը պայմանավորված է թե՛ տեխնիկական, թե՛ մշակութային առանձնահատկություններով: Գորգը գործված է կրկնակի հանգույցով, որը բնորոշ է հայկական գորգագործությանը: Այն բնորոշ է եղել Հայկական լեռնաշխարհին և հետագայում տարածվել այլ ժողովուրդների շրջանում: Պազիրիկ գորգի դեկորատիվ զարդամոտիվները՝ աստղածաղկային և երկրաչափական ձևեր, հիշեցնում են հայկական խաչքարերի և կարպետների նախշերը, հատկապես աստղաձև, բուսական և կենդանական թեմատիկայով: Այն պատմական վկայություն է հայ ժողովրդի գեղարվեստական և կիրառական արհեստների զարգացման երկարատև ավանդույթի մասին [2, 3]:

Հույն պատմիչ Ստրաբոնը վկայում է, որ Հայկական լեռնաշխարհը հայտնի էր իր բարձրորակ գործվածքներով, ներառյալ գորգերով, և նշում է, որ Մեծ Հայքի տարածքը Ք.ա. V-III դդ. եղել է գորգագործության խոշոր կենտրոն: Իսկ հույն պատմագիր Հերոդոտոսի վկայությամբ իրենց արքունիքն օգտագործել է «*առավելապես հայկական*» և բնական նյութեր, որոնք համընկնում

էին հայկական գորգերի հնագույն օրինակների ներկապնակի հետ: Հատկապես *որդան կարմիրից* ստացված ներկը բնորոշ է հայկական գորգերին [3]:

Բյուզանդական հեղինակ Սիմեոն մագիստրոսն իր ժամանակագրության մեջ պատմում է, որ 814 թ. բուլղարների կողմից Թրակիա կատարած արշավանքի ժամանակ վերցրած ավարի թվում կային հայկական բարձրորակ խավավոր գորգեր: Արաբական աղբյուրները ևս հիշատակում են հայկական գորգերի մասին, որ մանվածքները բերում էին Միջագետքից և ներկվում էին բնական ներկերով (շեշտվում է որդան կարմիրը), նաև իրենց շքեղությամբ և որակով գերազանցում էին Եգիպտոսի Ասիութ քաղաքի գործվածքներին: Ըստ արձանագրությունների, Կեսարիայում տարեկան արտադրվել է մոտ տաս հազար գորգ և աշխատել են ավելի քան տասներկու հազար գորգագործ և գորգի պատկերները նախագծող վարպետ [3, 4]:

Հայկական մանրանկարչության մեջ գորգերի առկայությունը վկայում է հայկական միջավայրում կիրառության և գեղագիտական նշանակության մասին: Հորինվածքային հատկություններից կախված, նկարիչները փորձել են տերունական պատկերներում իրական միջավայր ստեղծել գործողություններին կենդանություն հաղորդելու համար, պատկերելով դրվագներ իրենց ժամանակի կյանքից: Հաճախ են հանդիպում ոճավորված ծալադարսումներով վարագույրներ, ծածկոցներ, կարպետներ, բարձեր, գորգեր և դեկորատիվ բնույթի հարդարանքներ: Ավետարանների նկարազարդումների շարքում բազմաթիվ օրինակներ պատկերում են տեսարաններ, որոնք ծառայում են որպես հայկական սովորույթների, արհեստագործական ավանդույթների և էթիկական նորմերի անկրկնելի պատմական արձանագրություններ [5]:

Արդյունքներ և քննարկում

Հայկական ձեռագրերն իրենց գեղարվեստական արժեքից դուրս ծառայում են որպես ազգագրական հարուստ գրառումներ՝ բացահայտելով ազգային գիտակցության մասին պատկերացումներ: Գորգերը հայ ժողովրդի ինքնության անկրկնելի վավերագրերն են, գրված հայ կնոջ ձեռքով, իբրև հազարամյա ավանդույթների ազնիվ խոստովանություն [6]:

Ուսումնասիրությունը համեմատում է հայ մանրանկարչության որոշ դպրոցների հայտնի ձեռագրեր: Մի շարք մանրանկարներ արժանահիշատակ են ներսույթների, առարկայական միջավայրի, գորգերի և կարպետների բազմազան օրինակներով:

Նկ. 2. Խորհրդավոր ընթրիք, «Մողնու Ավետարան», Հովհաննես, 1060թ., Մատենադարան, թիվ 7736

Դրանք հանդիպում են տիտղոսաթղթերում, անվանաթերթերում, տերունական պատկերներում, երբեմն նաև խորանների և տեքստերի լուսանցքների թեմատիկ նկարազարդումներում:

Նկ. 3. Աստվածամայրը մանկան հետ, «Ադրիանապոլսի Ավետարան», 1007թ., սբ Ղազար, Մխիթ. միաբան., թիվ 887

Այդ առումով բացառիկ է XI դ. «Մողնու ավետարանը», որի մի թեմատիկ նկարում կա գորգագործության աննախադեպ նմուշ (նկ. 2): Ծաղկող Հովհաննես Սանդղկավանեցին գուցե ցանկացել է ավետարանական թեման կենդանացնել հատակին գցված գորգով: «Խորհրդավոր ընթրիքի» տեսարանում պատկերված գորգը գցված է Քրիստոսի և առաքյալների առջև սեղանի տակ: Գորգը լի է երկրաչափական, ծաղկային նախշերով և խաչերով, որոնք բնորոշ են հայկական ավանդական գորգերին: Գորգի զսպված, բայց հարուստ տեսքը լրացնում է սուրբ թեման՝ կրոնական պատմությունը կապելով հայկական մշակութին: Ռիթմիկ պատկերներով վառ կարմիր գորգը խորհրդանշում է խոնարհություն և ակնածանք [1, 7]:

Գորգի այդ տեսակն իր հատկանշական տվյալներով շատ մոտ է Պազիրիկ գորգին՝ հորինվածքի, կարմիր գույնի և նախշազարդումների առումով:

Հաջորդ օրինակը XI դ. «Ադրիանապոլսի Ավետարան» է, որի մի տեսարանում Տիրամայրը մանկիկին գրկած նստած է դեկորատիվ հարդարված փափուկ բարձին, իսկ տակը գցած է նուրբ նախշազարդումներով գորգ: Այն ծառայում է որպես հիմք, *«սուրբ տարածք»,* որն ավելին է, քան պարզապես գեղագիտական իմաստը (նկ. 3): Գորգը վառ գույների նախշեր է պարունակում: Կարմիր գույնը կապվում է կյանքի հետ, իսկ կապույտը և կանաչը խորհրդանշում են հոգևոր գերազանցություն: Գորգը զարդարված է խաչաձև երկրաչափական և ծաղկային նախշերով: Խաչերը նշանակում են աստվածային ներկայություն և պաշտպանություն, ոճավորված պտուղները՝ մայրություն, որոնք հայկական ավանդույթներում բարգավաճման խորհրդանիշ են: Գորգի այս տեսակն իրական կյանքում հնարավոր տարբերակ է, քանի որ նմանատիպ հարդարանքով ծածկոցների և եկարավուն բարձերի մասին աղբյուրներում նշվում են [1, 8]:

Մեկ այլ ձեռագրում՝ Անիի դպրոցի 1211 թ. «Հաղպատի Ավետարանում» (նկ. 4) ծաղկող Մարգարեն հիանալի ներկայացնում է հայկական գորգի տիպիկ օրինակ: Ընդհանրապես նկարիչները խորանային տարածքները գեղազարդում էին ծաղկեփնջերով, կենաց ծառերով, թռչուններով կամ ոճավորված խաչերով, հազվադեպ՝ նաև աշխարհիկ և հոգևոր կերպարներով:



Նկ.4 Խորան, «Հաղպատի Ավետարան», Մրգարե, 1211թ, Մատեն., թիվ 6288

Լուսանցազարդում պատկերված գորգի վրա ծալապատիկ նստած է գուսան՝ երաժշտական գործիքը ձեռքին: Երաժիշտը նվագում է հայացքը մի կողմ թեքած, կարծես, տարված է հնչող մեղեդիով: Ետևում նռան պտուղներով ծառ է, որի վրա նրբորեն նստած է սիրամարգ: Պատկերն ամբողջացնում է հարուստ զարդանախշերով և ծոպափնջերով երիզված գորգը, որը ծառայում է որպես սրբազան հիմք: Կարմիր ու կանաչ երանգներով ծաղկային նախշերը ներդաշնակ միահյուսված են: Սիրամարգը, որը զուգորդվում է գեղեցկության և դրախտի հետ, ծառայում է որպես հոգևոր պահապան: Երաժիշտի տակ գորգի տեղադրումը կրոնական համատեքստում մշակութային ժառանգության հանդեպ հարգանքի խորհուրդ ունի: Գորգը և երաժշտարանը շեշտում են հայկական մշակույթի բազմաշերտ կողմերը՝ որպես հոգևոր արտահայտման ձև: Այս խորհրդանիշների միջոցով թեմատիկ պատկերում արտացոլվում է արվեստի հայկական ըմբռնումը [1, 9, 10]:

Վերոհիշյալ օրինակները ցույց են տալիս, թե ինչպես են հայկական միջնադարյան ձեռագրերում գորգերը գործում որպես մշակութային արժեքներ: Դրանք կրոնական գաղափարների փոխանցման միջոց են հանդիսանում, աշխարհիկ գեղեցկությունը կապելով աստվածայինի հետ՝ հայկական մտածելակերպին բնորոշ գեղագիտությամբ:

Հարկ է նշել, որ հնագույն ժամանակներից հայկական *կարպետագործությունը* բավական զարգացած է եղել: *Կարպետը* հատուկ հենքի վրա գործք է, որն ունի ռելիեֆային նուրբ ֆակտուրա: Հայ գրականության մեջ *կարպետ* բառը հանդիպում է V դ.՝ Աստվածաշնչի թարգմանության մեջ: Այդ տերմինը հանդիպում է նաև եվրոպացիների մոտ [6]:

1295 թ. Մարսելից Կիլիկիայի Այաս նավահանգիստ նավով ժամանած վենետիկցիների կողմից կողոպտված իրերի փաստաթղթի մեջ հիշատակվում է *կարպետ*՝ «*karpet»,* նկատի ունենալով *գորգ:* Միջին դարերում հայ առևտրականները Կիլիկիայից, Վասպուրականից, Գողթնից, Սյունիքից, Արարատից արտահանել են գորգ, որոնց համար օգտագործել են *կարպետ* բառը: Ուսումնասիրության ընթացքում հանդիպել են տարբեր ձևերով գործված կարպետներ, որոնց տեսակներից են՝ *մեզար, ջեջիմ, շուլալ օղաճիտ, փնջավոր (ծոպավոր)*: Պատմաբան Վ. Հացունին իր աշխատության մեջ օրինակ է բերում Ոսկեբերան թարգմանչի գրածը օժիտ բերած կնոջ մասին. *«Եվ ոչ կարպետ անգամ զուսովքն զտաներ արկանել, իսկ այլուր կշեշտե տնանկաց կարոտը կարպետի մեջ ձորձոյ..»* [11]:

Կարպետների պատկերներով արժանահիշատակ է Կիլիկիայի դպրոցին պատկանող 1256 թ. «Զեյթունի Ավետարանը», որի նկարազարդողը և գրիչը եղել է Թորոս Ռոսլինը (նկ. 2): Նրան բնորոշ էր կրոնական տեսարանների պատկերման կատարողական վարպետությունը:

Ավետարանիչների նստած միջավայրում կարպետները շեշտադրված դեկորատիվ դեր

Նկ. 5. Ղուկաս, Հովհաննես ավետարանիչներ, «Զեյթունի Ավետարան», Թորոս Ռոսլին, 1256 թ., Մատենադարան, թիվ 10450

ունեն (նկ. 5): Ոտքերի տակ գցված ուղղանկյունաձև ամուր հյուսվածքով կարպետները լի են վառ գույներով և զուսպ զարդամոտիվներով: Երկու ավետարանիչների պատկերներում կարպետները երիզված են նախշերով, որ հիշեցնում են զարդարվեստի թանկարժեք քարերով ոսկերչական տեխնիկա [7, 12]:

Հայաստանում խոշոր գորգերի հետ մեկտեղ զարգացած է եղել մանր գորգերի արտադրությունը: Դրանք գործածվում էին աղոթքների ժամանակ: Ըստ արաբ աշխարհագիր Իդրիսիի հիշատակության, հայերն աղոթքի համար փռում էին ծնկների տակ փոքր գորգ, որոնք կոչվում էին *տափաստ* կամ *տափաստակ*: Հիմնականում այդ փոքր կարպետները կիրառում էին քարավաններով ուղևորվող վաճառականները: Ուշագրավ է, որ վրացական մի ժամանակագրության մեջ նշվում է *«հայկական տափաստակ»* [4, 6]:

Մյուս երկու ավետարանիչների ոտքերի տակ գցված փռոցներն ունեն կիսշրջանաձև տեսք, դեկորատիվ նախշերով հարդարված: Զարդամոտիվների դեկորատիվ համաչափ ռիթմիկան խորհրդանշում է հարատևություն՝ առավել շեշտելով աստվածային էությունը: Կարպետները գունային լուծումներով համահունչ են ներքին տարածքին և առարկայական միջավայրին (նկ. 6) [7, 13]:

Նկ. 6. Մաթևոս, Մարկոս ավետարանիչներ, «Զեյթունի Ավետարան», Թորոս Ռոսլին, 1256 թ., Մատենադարան, թիվ 10450

Այս ձեռագրերն ընդգծում են գորգի պատկերագրության բազմակողմանիությունը: Առանձնահատուկ են նաև գորգանախշային հորինվածքները, որոնցով առատորեն ձևավորել են խորանների և անվանաթերթերի գլխազարդեր: Հմայական նախշերի իմաստներն ընդգծելու համար մանրանկարիչները գորգերից վերցրել են մոտիվներ՝ օգտագործելով խաչերի, կենաց ծառերի, երևակայական կենդանիների, բուսական և թռչնային նախշապատկերներ: Գորգերի խորհրդաբանությունն օրգանապես կապում է մանրանկարչական արվեստը հայկական դեկորատիվ կիրառական արվեստների հետ՝ ցույց տալով, թե ինչպես է գեղարվեստական վարպետությունը ծառայում գեղագիտական հայացքներին [14]:

Եզրակացություն

Հայկական մանրանկարչության մեջ գորգերի պատկերագրական վերլուծությունը կրկին հնարավորություն է ընձեռում միջնադարյան պահանջները հասկանալու, որոշակի պատկերացումներ կազմելու ծածկոցների, գորգերի հանդեպ հակումների վերաբերյալ: Ներդաշնակելով կենսաձևն ու հոգևոր ընկալումները, գեղահարդարանք են ձեռք բերել նաև հանդերձանքը, կահույքը, կահկարասիքը և կիրառական նշանակությամբ այլ առարկաներ: Այս վերանայումը

հստակեցնում է հայկական գորգերի մշակութային կարևորությունը և կապը հայկական ինքնության հետ:

Վերլուծական աշխատանի եզրահանգումները հետևյալն են.

- հայկական գորգը միջնադարյան հայկական մանրանկարչության մեջ մշակութային արժեք է և ներքին հարդարման համար հոգևոր նշանակություն ունի,
- *գորգը և կարպետը* հայկական կենցաղում ավանդական և սովորույթային առարկաներ են եղել, կազմելով տան հարդարանքի անհրաժեշտ մաս:

Ուսումնասիրությունը բացահայտում է ավետարանային թեմատիկ պատկերներում գորգը որպես դեկորատիվ տարր և սոցիալական ինքնության ցուցիչ: Հայկական գորգը միջազգային ճանաչում ունի, և, ըստ միջնադարյան պատկերագրության, դրա կիրառության պարզաբանումը նոր լույս է սփռում ինչպես հայկական արվեստի, այնպես էլ համաշխարհային գեղարվեստի պատմության վրա:

Գրականության ցանկ

[1] **Ա. Աղասյան, Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Վ. Ղազարյան**, Հայ արվեստի պատմություն, Երևան 2009, 134 էջ:

[2] **Վ.Ս. Թեմուրճյան**, Գորգագործությունը Հայաստանում, պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, 1955, 13 էջ:

[3] **Ֆոլքմար Գանցհորն**, Քրիստոնե-արևելյան գորգը. Ակունքներից մինչև XVIIIդ. ընկած պատկերագիտական զարգացման ուրվագիծ, թարգմ. Հ.Ստեփանյան, ՀՊԹ, Երևան, 2013:

[4] **Բ.Ն. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները IX-XIIIդդ., հրատ. Հայկական ՍՍՀ ԳԱ, Երևան, 1958, 376 էջ:

[5] **Ա.Լ. Բաբաջանյան**, Կահույքի պատկերագրությունը հայ միջնադարյան մանրանկարչության մեջ, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 2(89) (2024) 3-12:

[6] **Ա.Բ. Գևորգյան**, Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, ալբոմ, հրատ. «Հայաստան», Երևան, 1978, 3 էջ:

[7] **Լ.Ա. Դուրնովո**, Հայկական մանրանկարչություն (ալբոմ, խմբագիր՝ Ռ. Գ. Դրամբյան), Երևան, 1967, 40 էջ:

[8] **Graziella Vigo**, I Tesori, Di San Lazzaro Degloi Armeni, Silavana Editariale, 2011an, 311 p.

[9] **Վ. Մաթևոսյան**, Մարգարե, հրատ. «Անահիտ», Երևան, 1990, 60 էջ:

[10] Armenian miniatura: of the 13th and 14th centuries, from “Matenadaran collection”, Yerevan, Aurora art publishers, Leningrad, 1984, 164 p.

[11] **Ս.Ս. Դավթյան**, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, հրատ. Հայկական ՍՍՀ, Երևան, 1981, 180 էջ:

[12] **Լ.Ռ.Ազարյան**, Կիլիկյան մանրանկարչություն XII-XIIIդդ., հրատ. Հայկական ՍՍՀ ԳԱ, Երևան, 1955, 658 էջ:

[13] **В.О. Казарян, С.С. Манукян**, Матенадаран-Армянская рукописная книга VI-XIV веков, изд. “Москва книга”, Москва, 1991, 282 с.

[14] **Ա.Շ. Մնացականյան**, Հայկական զարդարվեստ, հրատ. Հայկական ՍՍՀ ԳԱ, Երևան, 1955, 658 էջ:

ИКОНОГРАФИЯ КОВРА КАК ОБЪЕКТ ИНТЕРЬЕРНОГО ДЕКОРА В АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ МИНИАТЮРЕ

Армине Левоновна Бабаджанян
Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
armenuhiartdesign@gmail.com

Статья представляет иконографию ковра (карпета) в армянской средневековой миниатюре. Цель исследования — показать двойную роль иконографии ковра в духовном и практическом аспектах, рассматривая художественное оформление интерьера на примерах миниатюр. Тема актуальна, так как связь между ковром и миниатюрой способствует переоценке культурного наследия, а с помощью иконографии становится возможным восстановление полного образа средневекового армянского дома. Задача исследования - выявить ритуальные и художественные функции изображений ковра. В результате работы сделаны следующие выводы: 1) в миниатюрных композициях ковер является частью интерьера, 2) несмотря на условности миниатюры, иконография ковра сохраняет реалистичность. Исследование может служить руководством для изучающих традиции внутреннего убранства средневековой Армении и символические особенности армянского коврового искусства.

Ключевые слова: *манускрипт, рукопись, миниатюра, иконография, иллюстрация, предметная среда, художественное оформление, ковер, карпет*

THE ICONOGRAPHY OF THE CARPET AS AN OBJECT OF INTERIOR DECORATION IN ARMENIAN MEDIEVAL MINIATURES

Armine Babajanyan
National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
armenuhiartdesign@gmail.com

The article presents the iconography of carpets in Armenian medieval miniature art. The aim of the research is to highlight the dual role of carpet iconography in both spiritual and practical contexts, examining the artistic decoration of interior spaces through examples from miniature art. The topic is relevant because the connection between carpets and miniature art contributes to the reevaluation of cultural heritage, and through iconography, it becomes possible to reconstruct the complete image of a medieval Armenian home from a new perspective. The study's objective is to reveal the ritualistic and artistic functions of carpet depictions. The conclusions of the study are as follows: 1-In miniature compositions, the carpet is an integral part of the interior space. 2-Despite the conventions of miniature art, the iconography of carpets maintains a realistic essence. The research can serve as a guide for those studying the traditions of interior decoration in medieval Armenia and the symbolic characteristics of Armenian carpet art.

Keywords: *manuscript, codex, miniature, iconography, illustration, material environment, artistic decoration, carpet, rug*

Բաբաջանյան Արմինե Լևոնի *(ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեսության, պատմության և ժառանգության ամբիոն, ասիստենտ, (+374)77480801, armenuhiartdesign@gmail.com*
Бабаджанян Армине Левоновна *(РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теории архитектуры, истории и наследия, ассистент, (+374)77480801, armenuhiartdesign@gmail.com*
Babajanyan Armine *(RA, Yerevan) - NUACA, Chair of Theory, History and Heritage of Architecture, assistant, (+374)77480801, armenuhiartdesign@gmail.com*

Ներկայացվել է՝ 28.10.2024թ.
Գրախոսվել է՝ 23.11.2024թ.
Ընդունվել է տպագրության՝ 25.12.2024թ.